

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

«ԱՂԲԻՐ» Միամսեայ պատկերազարդ հրատարակութիւն մանուկների և դաստիարակների համար: Եօթներորդ տարի. Խմբագիր-Հրատարակիչ Տիգրան Նազարեան: Թիֆլիս. Յ. Մարտիրոսեանի տպարան. 1889 թ. №№ 1, 2, 3:

Ընթերցանութեան միջոցով նպաստել մանուկ սերնդի մտաւոր ու բարոյական զարգացման և օժանդակել դաստիարակներին՝ ան «Աղբիւր» ամսագրի նպատակը: Բոլոր ներքոյ ասածները առաջ են գալիս միայն մի ցանկութիւնից, այն է՝ տեսնել «Աղբիւր»-ը իրագործելիս ստանձնած գործը օրինաւոր կերպով: Փոյթ չէ, որ մեր մամուլը արդէն արմատացրել է հալի հասկացողութեան մէջ այն համոզմունքը, որ կարծիք չպատեն կարելի է դրդած կամ կատաղի, կոչը կըրքից կամ շողոքորթելու ցանկութիւնից. փոյթ չէ նոյնպէս, որ «անսխալականութիւնը» ոչ միայն Հռոմի պապի առանձնաշնորհումն է համարւում, այլ նաև ամեն մի հալի: Մենք անաչառութեամբ և ուղղամտութեամբ չպատում ենք մեր ղիտողութիւնները, թողնելով «Աղբիւրի» խմբագրութեան (որի ընտրած նպատակը պահանջում է ոչ միայն մտաւոր պատրաստութիւն, այլ նաև բա-

րոյական առաքինութիւններ) որոշել արդեօք մեր ասածները կարգաւուց չեսու, հետևել հալ գործիչների ընդհանուր տգեղ սովորութեան, թէ զեղեցիկ բացառութիւն կազմել:

«Աղբիւրի» արտաքինը այն կատարելութեան է հասել, որ աւելի շատ դժւար է պահանջել. նկարները այնքան դիւր են գալիս բոլորին, որ պ. Ղ. Աղաչեանցի ասելով — «Աղբիւրը» ձեռք է ձեռք են չափշտակում, միջից պատկերները կտրում և զրկում խեղճ բաժանորդներին (ճիշդ որ խեղճ. արտ էլ ինչ է մնում եթէ պատկերներն էլ չը լինին), իսկ պըրէմիաները այնքան հրաշալի են որ «ռուսները, որոնք բաժանորդ չեն գրում «Աղբիւրին», որովհետև հայերէն չը գիտեն (եթէ ոչ անպատճառ երեսխանների համար հրատարակող ռուսաց ամսագիրները կը թողնէին և «Աղբիւրին» կը գրէին), առնում են միայն պրէմիան, ամենայն ուրախութեամբ վճարելով երեք ռուբլի:

Ով ականջ ունի լսելու՝ թող լսէ, ով ամաչելու առիթ ունի, թող ամաչէ» (տես «Աղբիւր» № 1, 1889, երկր. բաժ. եր. 15): Այս բոլորը աբապէս լինելով հանդերձ, ցանկալի է որ մանկական ամսագրում սրբազրութիւնը ալնպէս կատարւէր, որ չը պատահէին, օրինակ, աբապիսի վրիպակներ. երկու թնրով, ա աղերսանք, հրեշտակակի, եգեղ, աեգական, տղտա, և այլն (եր. 13, 69, 79, 101, 222):

Գալով ներքինին, նախ տեսնենք ինչ է ստում ինքը պ. խմբագիրը: Պատասխանելով (տես № 1, բաժ. երկ. եր. 16) «բարենեգ (?) հակառակորդներին», որոնք հաւատացնում են պարզամիտներին, թէ «Աղբիւրի» խմբագրութիւնը ուէկլամներ է գրում (ինչպէս կարելի է!), պ. խմբագիրը ասում է՝ «մեր արածը մի շնորհք, մի աղնիւ ձգտում է, որից զուրկ են մեր շնորհալի և ազնիւ հակառակորդները», և լետոյ շարունակում է. «Եւ միթէ «Աղբիւրի» խմբագրութիւնն ալնքան մատատես է, որ չիմանալ, թէ ինչումն է ճշմարիտ գրաւչութիւնը և լառաջողիմութեան գաղտնիքը (?): Մենք միամիտ չենք (?), պարոններ, գիտենք աւելի տալ, որ ունենանք կիսով չափ պահանջելու իրաւունք: Եւ մենք այսօր տալիս ենք տասնապատիկ աւելի քան թէ պահանջում ենք, որ ուղհեմ և «Աղբիւրը» ահա մեմատ բարձր է եւրոպական նման հրատարակութիւններին (тв-э...экс...сэ!): Օ՛... ալք չափից զուրս է արդէն, պիտի բացականչէք: Ոչ թէ չափից զուրս է, ալլ բնականապէս ալսպէս էլ պէտք է

լինի (?): Եւրոպան հասունացել է, երիտասարդ է. ալնտեղ ալլ ևս չը կազ(?) մանկական կեանք, մինչդեռ մեր ամբողջ կեանքը դեռ ևս մի մանուկ է, հարուստ մանկական նիւթով: Միթէ միևնոյն մանկական կեանքի աղքատութիւնը, ժողովրդական տարրից զուրկ լինելը չի երևում և Պօլտոյ «Մանկական Բուրաստանի» մէջ: (Ասումս զկալ, անգիտակցաբար մի անարժան «կօմպլիմենտ») էք անում մեր մանկամիտ հոսոններին, կարծելով ալք տխմարներին էլ հասունացած եւրոպացիներին պէս, կարծելով որ մանկական կեանքի աղքատութիւնը նոյն պատճառներից է, թէև ալք էլ բոլորովին սխալ հասկացողութիւն է, որ Եւրոպայում ալլ ևս մանկական կեանք չը կալ: Լմա, էլ աշխարհիս ո՞ր ծալրում ալնքան մանուկներ, երեխաներ, որքան Պօլտում է, միթէ ալնտեղ «հասունացած» շատ մարդ կը գտնէք...): Խը մբագիրն ալնտեղ մեղաւոր չէ, (ալնպէս որ կարող է ամեն վիսարութիւններ և անհամութիւններ տըպել, որովհետև... «հասունացած» հասարակութեան անդամ է) ալլ կեանքըն է սնանկացած, իսկ մեր կեանքի մանկական աշխարհը դեռ գոցութիւն ունի իր բնական վիճակի մէջ (ահա ինչ բարեպաշտող պալմաններին մէջ է հրատարակում «Աղբիւրը» և դ՛հք, բարենեգներ, ցնծալու և ուրախ լինելու տեղ՝ տրտունջ էք լալտում...): Ասումս տալ միալն, որ «Աղբիւրի» տաղանդաւոր (ընճմ...) աշխատակիցները ալս հանդամանքն

(որ միայն կողկասեցի հալերս մանկական հարուստ կեանք ունինք) ի նկատի ունենան և մեր մանկական հարուստ կեանքից որքան կտրելի է; (ոչ աւել և ոչ պակաս) շատ պաշար հասցնեն «Աղբիւրին»: Ահա բուն գաղտնիքը (?) «Աղբիւրի» կենդանութեան (կաւելացնենք՝ նաև անմեղութեան), հետևապէս նորա գրաւչութեան և սիրելիութեան»: Այս հրաշալի և խորիմաստ խմբագրական ծանօթութիւնից դառնանք «Աղբիւրի» բովանդակութեան:

Ծարէ ի ծայր կարգալու առաջին երեք համարների մանկական բաժինները, չէ կարելի գտնել համարեան ոչ մի գրւածք հետաքրքրելի ու մատչելի 8—12 տարեկան երեխաներին: Չը նպած վերև բերած պ. խմբագրի կարծիքին, որ Եւրոպայում այլ ևս չը կազ մանկական կեանք և անտեղ ուրեմն և մանկական գրականութիւնը աղքատ պէտք է լինի, իսկ մենք ունինք մանկական նիւթով հարուստ կեանք, անուամենայնիւ «Եւրոպայի» մանկական գրականութիւնից արած թարգմանութիւնները բռնում են «Աղբիւրի» մեծ մասը, իսկ կարգին, ինքնուրույն բան չը կազ համարեա: Բացի այդ, ինչպէս թարգմանական, նոյնպէս ինքնուրույն չղաւթների մէջ եթէ կան փոքր ի շատէ չաջողածները, այն էլ լիապէս մատչելի չեն կարող լինել 8—12 տարեկան «մանուկներին»:

Բուն բովանդակութիւնը քննելուց առաջ կը նկատենք, որ շատ գեղեցիկ է առհասարակ ձգտումը՝ ծանօթացնել նկարներ տպելով մեր գոր-

ծիչների, պատմական անձերի ու վիշատակների հետ, բայց հազիւ թէ լոկ պատկերները մի որ և իցէ ուսանելի աղբեցութիւն ու նշանակութիւն ունենան: Ուրիշ խնդիր է, եթէ այդ պատկերներին կից լինէին մանուկների համար գրած կենսագրական—պատմական չղաւթներ, որոնք ծանօթացնէին թէ ինչու այս կամ այն գործիչը արժանացել է հազար գիւրդանքին և սիրուն, թէ ինչ թանկագին վիշտութիւնների հետ ևն կապած այս կամ այն պատմական անձնաւորութիւնը, շինութիւնը, և այլն: Ահա չարմար առիթ պատկերացնել հարց պատմութեան մի քանի էջերը (օր. ս. Շուշանիկի, ս. Վարդանի պատկերների առիթով) մանուկների երևակալութեան առաջ: Արդարև փորձ կազ (№ 3) մեր գործիչների կենսագրութիւնը կցել տըպւող պատկերներին (Չմշկեանի առիթւ): Բայց լոկ տարիների, հիմնարկութիւնների և ազգանունների ցուցուկը հեռու է մանուկների համար կենսագրական չղաւթ լինելուց. նա ոչինչ չէ տեսնում ոչ նոցա սրտին և ոչ խելքին: Առաւել ևս անչարմար է տպել այն ձևով գրած նկարագիրը, որպիսին է «Արշալույսը» («Աղբիւրի») պրէմիալի առիթով № 3-ում). ոչ բուռերի ու լեզուի գրաբարեան ճոխութիւնը, ոչ հուետօրական շեղումները ու զեղմունքը (πλάσμα), ոչ էլ թախծի, չղաւթատութեան և այլ սարսափելի մոպզ զգացմունքների արտապատմութիւնը կարող են գրաւել և հասկանալի լինել «մանուկներին»:

Պ. Փ. Վարդանեանի (պէտք էր չղաւթի վերնագրում վիշած պարսիկ

բանաստեղծի անունը) «Ռուստէմ և Ջոհրար» վէպը այս տարւակ «Աղբիւրի» (առաջին երեք համարները) ամենալաւ և լաջող արձակ գրւածն է: Այդպիսի գրւածներ լախշտակութեամբ կարդացուած են փոքրիկ ընթերցողներինց. իսկ դորա նման ճոխ, գեղեցիկ ու կանոնաւոր լեզուն աննկատելի կերպով գրոշմուած է մանուկ խելքերում մալրիների լեզուի համը և ոգին: Մի ժամանակ պ. Ղ. Աղաւանցն էլ ճոխացնում էր «Աղբիւրը» իր հէքլաթներով. ափսոս, որ նա իր ընդունակութիւնները և օգտակար գործունէութիւնը այդ ասպարիզում թողել է և խնդան դուրս եկել բանակուական ասպարիզն դաշտում: Համեմատաբար թոյլ են «Տ. Վիտտտալի երազը», Թարգմ. Մարիամ Աբրիմանցի (№ 2), և «Կամբի ուժը — Միքէլ Ֆարադէյ»՝ Ջարուհու Աւելի հետաքրքրական է իմանալ, արդեօք այդ վերջինը փոխադրութիւն է, թէ ինքնուրոյն, քան թէ որ դա մի «նէւր» է ինչ որ պ. Տ. Միքէլ Բաղալանցին: Այս կենսագրութիւնը կարող է հասկանալի լինել այն հասակի երեխաներին, որոնք հասկանում են բնագրում պատահող այս բառերը. «հանրագրտական բառարան, կալի, նատր, տարրական քիմիա, էլեքտրականութիւն, ֆիզիկա, Վօլտայի սիւն, գալվանական էլեքտրականութիւն, քաղաքական, գրական գործեր, հակազմալցեց, լաբորատորիա, և այլն»): Թէկ հազիւ մինչև անգամ այդ «մանուկներն» էլ համաձայն են այս փիլիսոփայութեան հետ. «այն կազմարարը, որ չի հետաքրքրուել իր կազմած գրքերի բովանդակութեամբ, նա երբէք չի

էլ կարող (փիէ) լաւ կազմարար լինել» (եր. 27):

Թարգմանական լոգւածների մասին խօսելը վերջացնենք «Վարպետ Կոննելի վարմունքը» (Ալֆօնս Գօդէից) թարգմանութիւնով, նկատելով միայն որ նա չի արտապալտում բնագրի ոչ ոգին և ոչ սրամտութիւնը: Ի դէպս. միթէ ալիւր ու ցորեն կրում են «քսակներով» և ոչ տոպրակներով կամ պարկերով. չէ որ «քսակը» (РАШЕЛОКЪ, МѢШЕЧЕБЪ) շատ է փոքր, որ նորանով ցորեն կրէին ջրաղացը: Գալով ինքնուրոյն, «մեր հարուստ մանկական նիւթով կեանքից» վերցրած արձակ լոգւածներին՝ մենք չենք կարող ցոյց տալ ոչ մէկը՝ իբրև անպալման չարմար և հետաքրքիր մանկական ընթերցանութեան նիւթ. էլ չենք խօսում պ. Ա. Օհանջանեանցի «Չմեռնալին երեկոյ» գրւածների պէս թոյլ, անբնական, անհամ կարկատանների մասին, որոնք ցոյց են տալիս, որ «Աղբիւրի» «տաղանդաւոր աշխատակիցներին» (տես № 1 բաժ. 2. եր. 16) շատերը չեն կարողանում օգտուել այն «հանդամանքից», որի վրայ մատնանիշ է անում պ. խմբագիրը, այսինքն՝ «որ Սւրոպալում այլ ևս չը կալ մանկական կեանք, մինչ դեռ մեր ամբողջ կեանքը դեռ ևս մանուկ է, հարուստ մանկական նիւթով»): (Ի հարկէ այդ դեռ չի նշանակում, որ մեր մանկական գրականութիւնը պէտք է հարուստ լինի մանկամիտ, խակ նիւթերով...)

Յարգելի Պերճ Պռօչեանցի «Մերունի դաշտեցու պատմածը իր անցեալ կեանքից» (№ 1) գրածքի նըպատակն է, ինչպէս հեղինակն է ա-

սում, «իր փոքրիկ կարգացողներին լուծարի 1-ին նոր տարին կատարելու և լիջեցնել, որ մենք նաև առաջ ենք ունեցել: Բայց երկար ու բարակ պատմութիւնից լիտու, վերջը էլի անհասկանալի է մնում փոքրիկ ընթերցողների համար թէ, ախր երբ էր լինում առաջ մեր այդ նոր տարին, որ օրը, որ ամսին. միթէ երեխաներին բան են պարզում «նախաթողի շաբաթ օրը, հորթաթողի շաբաթ օրն» բառերը: Համարձակում ենք կարծել, որ եթէ այդ պակասութիւնը և մի քանի անտեղի շեղումները ու դաւառական չը բացատրած բառերը (օր. կթղան, բըղուղ, բասմա թայա և այլն) չը լինէին, աւելի հետաքրքրութեամբ կը կարդալին երեխաները այդ «պատմածը»: Օր. Պերճանոյզ Պռօչեանցի «31-ը դեկտեմբերի» գեղեցիկ է իւր տեղեկացիւթիւ, բայց ախտո՛ս, որ քիչ անմշակ է գրած: Արձակ ինքնուրոյն գրածներէից ուշադրութիւն է դարձնում իր վրայնոյնպէս՝ «Մի քանի օր Գուգարաց աշխարհում» պ. Թ. Ջաքարեանի ճանապարհորդութիւնը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է թէ որքան լաւ միջոց է ճանապարհորդական գրածներով ծանօթացնելու երեխաներին զանազան երկիրների և հայրենիքի բնութեան ու ժողովրդի հետ. բայց դրա համար ճանապարհորդութիւնը պէտք է գրւած լինի մատչելի և հետաքրքրական ձևով, իսկ այն հրապարակաստանական դատողութիւնները, որ բռնում են պ. Թ. Ջաքարեանի ճանապարհորդութեան մեծ մասը, բոլորովին իրանց տեղումը չեն սմանկական» ամսագրում:

Հիմա անցնենք ոտանաւորներին, որոնց մասին ընդհանրապէս, ինչպէս և առհասարակ բոլոր նիւթերի մասին, կարելի է անել մի նկատողութիւն: Ամսագրում գետեղելի աչքի առաջ չի ունեցում որ ամսագիրը «մանուկներին» կամ աւելի ճիշդ «երեխաներին» համար է հրատարակում, ուրեմն նիւթերն էլ պէտք է երեխաների հասկացողութեան և ըզգացումներին մատչելի լինին: Միակ անպարման չաղող և չարմարն է 3 №-ում տպւած «Ծիծեռնակ» ոտանաւորը պ. Բարկասի. ահա այդ օրինակ պարզ, կոկիկ ոտանաւորներ պէտք է լինին «Աղբիւր»-ում. փոյթ չէ եթէ քիչ լինին, բայց այնպիսիք, որ ուրախութեամբ և մը երեխաներ բերան անէին նրանց. միայն այն ժամանակ ոտանաւորները կը հասնէին իրանց նպատակին՝ աղնւացնել մանուկների թէ բարոյականը և թէ մարմնի լեզուի ճաշակը: Պ. Յ. Յովհաննիսեանի «Չմեռնալին երգը», պ. Բալուղեանի «Իմ երգը» (փոխադր.) և պ. Մատուրեանի «Թռչնիկները» (նմանողութիւն), ունենալով բանաստեղծական արժանաւորութիւններ այնուամենայնիւ շատ էլ մատչելի չեն կարող լինել մանուկներին իրանց լիրիզմով: Իսկ պ. Ա. Սզեկեանի «Ի սէրն» ոտանաւորը իր մուսկ թախիծով բոլորովին անհասկանալի կը մնայ նրանց և առ հասարակ անհամապատասխան է մանուկներին ուրախ, զարթ բնաւորութեան. որտեղից որտեղ թախիծը, չռեւտեսութիւնը և մանուկները: Բայց էլի այս բոլորի մէջ բանաստեղծութիւն կա. սակայն պ. Ղ. Աղայեանցի «Առ Ղեկնդ հայր Ալիշանեան»

ճոճուան ոտանաւորը բարորոյիին իր տեղումը չէ և իսկն ասած բանաստեղծութիւն էլ չէ: Մանուկները հայ «Պրօմէթէոսի» (այսինքն Ալիշանի) «Մեծագոր հսկայ, Անտխեղծ լուսոյ հրօն սիրահարի» մասին, հաւատացէք, որ նոյն իսկ պատանիները ոչինչ չեն հասկանալ և ոչ մի գաղափար չեն կազմիլ: Երեսնաներին մեր գործիչների հետ ծանօթացնելը պէտք է ուրիշ կերպ, ինչպէս վերեր ցոյց տւինք: Բանաստեղծական նշույլից անգամ զուրկ է «Նէր Ղ. Աղայանցին նորա սիրելի աշակերտ Մուշեղ Մամիկոնեանից» ոտանաւորը: Գովելի է, ի հարկէ, աշակերտի զմալման և սիրոյ արտապատուութիւնը իր նախկին վարժապետին: Բայց այդ սրտի զեղմունքը թափուած ալդպիսի անհամ ոտանաւորով՝ ոչ ոքի համար, նամանաւանդ մանուկներին, հետաքրքրական չէ, բացի դուցէ ուսուցչին իրան, որը և կարող էր իր սիրեցեալ աշակերտի «Նէրը» ղնել ոսկեզօծ շրջանակում և կախ տալ իր գրասեղանի գլխին... Գրաչար Յակ. Ղազարեանի «Չմեռ»-ն բաւականին աջողած է:

«Գիտութեան» բաժնում շարունակում է տպւել քահանայ Բէղնազարեանցի «Երկրիս և իր վրայ եղած արարածների մասին զրոյցները»: Այդ լօղածների մասին կը խօսենք ուրիշ անգամ նոցա վերջանալուց լետոյ, երբ կը քննենք առ հասարակ բնական գիտութիւնների վերաբերեալ մեր ամբողջ գրականութիւնը: Միայն ի դէպս նկատենք, որ մեղ զարմացնում է այն, որ մեղանում շատերը իրանց թող են տալին բնական գիտութիւնների վե-

րաբերեալ գրականութեան մէջ: Օրինակ, միինչ որ հոսոս ընդօրինակում է, արտատպելով նաև բոլոր պատկերները, պրօֆ. Paul Bert-ի լատինի «Գասախօսութիւններ կենդանաբանութիւնից» գիրքը *): Այդ աշխատութիւնը վերագրելով իրան, միայն աչքակապութեան համար կտորները լետ ու առաջ տանելով, նախադասութիւնները փոփոխելով, նա ոչ մի բառ չի էլ ասում հեղինակի մասին, իսկ պարզամիտներին խաբում է իր լառաջարանում նկատելով՝ «աշխատութեանս գլխաւոր առաջնորդներն (!?) եղան մեծահմուտ ուսուցիչներս Ռէնեաւ, Պլանչաւ, Փոլիէօ, Վէաքօ, Ֆառնօ և ալ էրեսնի (?) մօտ ամենակարևոր հեղինակաց ու գիտնոց գործերն»: Բայց իսկական հեղինակի՝ Պօլ Բէրի անունն անգամ չի տալիս, չը նախելով որ ամենաանամօթ կերպով սկզբից մինչև վերջը գողանում է այդ լատինի գիտնականի աշխատութիւնը: Եւ այդ գրականական գողը տեսէք ինչպէս է իրան լորջորջում գրքի կրեսին (տըպած է Պօլիս 1886 թ.): Բնական Պատմութիւն և այլն.

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ
Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԵՐԿՐԱԳՈՐԾ
ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱԿԵՐՏ

Փարիզու երկրագործական համալսարանին (?), նոյն քաղաքի ծառաբուծական եւ այգեբանական վարժարանաց, Մէրշի-

*) Այս գիրքը թարգմանուած է ուսուցիչներէն— Лекція Зоологін проф. Поля Бера.

նու գործնական եւ տեսական երկրագործական կրթարանին եւ Տնօրէն Արաման երկսեռ երկրորդ վարժարանին Քաղկեդոնի, Տնօրէն խմբագրապետ (?) «Գիտնական Շարժում» ամսօրեայ հանդիսի, եւ այլն, եւ այլն, եւ այլն (!!!?):

Եւ այսպիսի հոստոսներին «Աղբիւրի» խմբագիրը դժուակ է եւրոպացիներին հետ մի շարքում!...

«Նոր լուրեր» և «Այլ և այլք» բաժիններում լառաջ են բերւած «Հանդէս Ամսօրեակից» մի քանի կտորներ, որոնք պէտք է փոփոխւէին և լարմարացւէին «Աղբիւր»-ում արտատպելիս: «Ձուարճակը» և «Այլ և այլք» բաժինները լառ են 3 №-ում:

Գալով «Աղբիւրի» երկրորդ՝ դաստիարակների համար հրատարակող՝ բաժնին, պէտք է նկատել, որ ոչ մի չօղւած դաստիարակութեան և առհասարակ մանկավարժութեան վերաբերեալ նորա մէջ չէք գտնիլ: Դաստիարակների համար միևնույն է թէ այդ բաժինը գոյութիւն չունի: «Խառն լուրերի» և «խմբագրական պատասխաններին» համար «Դաստիարակների համար» բաժին ունենալն աւելորդ է, իսկ մի քանի չօղւածներն էլ, որոնք զետեղւած են այդ բաժնում, ոչինչ

կապ չունենալով դաստիարակութեան հետ, շատ շատ կարող էին տեղ գտնել մի որ և է լրագրի էջերում: Աւելի լառ կը լինէր, եթէ «Աղբիւրի» խմբագրութիւնը ձեռք վերցնէր բոլորովին այդ բաժնից, քանի որ երկար տարիների միջոցին չը կարողացաւ նորան տանել ինչպէս հարկն է, և իր ուշքը դարձնէր ամսագրի առաջին՝ երեխաների համար բաժնի վրայ, որի մէջ աւելի լառ ընտրւած նիւթերը դասաւորւէին երկու առանձին մասերում: մէկում նիւթերը լարմար և մատչելի լինէին 8—12 տարեկան երեխաների հասկացողութեան, միւսում աւելի մեծ պատասխանականին մօտ հասակին: Նիւթերը ընդունելիս պէտք է միշտ աչքի առաջ ունենալ, որ տպւում է երեխաների համար, որոնց խելքը միանշունչ գրատախտակ չէ, որի վրայ ամեն բան կարելի է գրել և սպունգով ջնջել: Շատ ցանկալի է, որ լրջօրէն ուշադրութիւն դարձնելի «Աղբիւրի» ներքինի վրայ, և հասցնել նրան առնւաղն նույն կատարելութեան, ինչպիսին է նորա արտաքինը:

Լ. Ս.

ՆՈՐ ՍՏՍՑԻԱՍ ԳՐՔԵՐ

- 1) Սահակեանց Սիսակ քահանայ—Սրբազան պատմութիւն Հին-Ուխտի: Աշակերտաց և աշակերտուհեաց համար: Հատոր I. Տիփլիս, տպարան Ռօտինեանցի, 1888 թ.
- 2) Նոյն հեղինակ—Դասագիրք կրօնի: Ուղեցոյց հալ կրօնուսույցների համար: Հին-Ուխտի մշակութիւնը: Հատոր I. Նոյնտեղ. 1888 թ.
- 3) Նոյն հեղինակ—Սրբազան պատմութիւն Նոր-Ուխտի: Հատոր II. Նոյնտեղ. 1889 թ.
- 4) Գաբրիէլի Անդրէաս—Բնաւորութեան կրթութիւնը (Թարգմ. Գ. Շահրուշաղեանցի): Թիփլիս, տպարան Մարտիրոսեանցի. 1889 թ.